# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

<<19>> դեկտեմբերի 2016թ. N 116

ք. Արմավիր

**<<ՄՈՒՍԱԼԵՌԻ ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՈՒՆՄԱՆ-ՀԱՆՁՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 255-Ա և 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 257-Ա որոշումները, <<Մուսալեռի Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**կարգադրում եմ՝**

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Մուսալեռի Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Նունե Զոհրաբյանին (համաձայնությամբ):

3.Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել եռօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

*ՄԱՐԶՊԵՏ՝* *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2016 թվականի 19 դեկտեմբերի

N 116 կարգադրության

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ն. Սարգսյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ:

**Անդամներ՝**

Վ. Միքաելյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ,

Լ. Հարությունյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

**Հանձնող՝**

Ա. Վեզիրյան - << Մուսալեռի Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն,

**Ընդունող՝**

Ն. Սվարյան- << Մուսալեռի Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**